

ԱՆՊՏՈՒԼ ԹԶԵՆԻՆ

«Պարտիպանը իր այգում մի թվենի էր տնկել. և երբ պաղի ժամանակը հասավ, նա եկազ նրա վրա պառող փնտրելու ու չգտավ: Այգեգործին ասաց. «Ահա երեք տարի է, որ գալիս եմ այդ թվենու վրա պառող փնտրելու և չեմ գտնում. արդ, կտրիր այդ. ինչո՞ւ է հողն զբաղեցնում»: Այգեգործը, որ շատ էր աշխատել այդ ծառի վրա, խնդրում է. «Տեր իմ, նրան այս տարի էլ թող, մինչեւ որ նրա շուրջը փորեմ և աղբ գցեմ. գուցե թե պառող տա, ապա թե ոչ՝ մի տարուց հետո կկարես այդ» (Ղուկ. 13:6-9):

Տանտերը՝ Երկնավոր Հայրն է, պարտիպանը՝ Հիսուս, իսկ անպտուղ թվենին՝ այն ժողովուրդն է, որը երկու հազար տարիներ առաջ ոչ միայն անտարբեր գտնվեց նրա քարոզած նոր Վարդապետության լուսի նկատմամբ, այլ ընդհակառակը՝ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին խաչ հանեց:

Եկեք մի պահ մտածենք այն ծառի մասին, որը պտղատու ծառերի մէջ խոշոր ու փարթամ տերեներ ունի, սակայն պտղաբեր չէ: Չե՞ք կար- ծում, որ այն իսկուր տեղն է զբաղեցնում հողի մի մասը ու արգելք լինում, որպեսզի այլ պտղատու ծառեր, իրենց համեղածաշակ մրգերով, հարստաց- նեն պարտեզը ու հաճելի դառնան մարդկանց: Հիսուս ասում է. «Եթե աղբ իր համը կորցնի, ոչ մի օգտակարություն էլ չունի»: Այսպիսի անպտղաբեր ծառերը նման- վում են այն մարդկանց, որոնք պաշտոններն են ստանձնում որևէ ասպա- րեկում, օգտվում են, սակայն ոչ մի ձեռվ իրենց նպաստը և օգնությունը չեն բերում նրանց հաջողությանն ու առաջընթացին:

Վերադառնալով առակին, այնպես է երեսում թե տանտերը համա- ձայնվել է ծառը չկտրելու և մեկ տարի ևս խնամելու խնդրանքին, բայց թե հաջորդ տարի ծառը պառող տվե՞լ է, թե ոչ՝ շատ էլ կարենոր չէ, որով- հետև անպտուղ թվենու առակի նշանակությունը ոչ մի ձեռվ չի փոխվում, պատասխանը իմանալով կամ չիմանալով:

Ուրեմն, «Ի՞նչ է սովորեցնում մեզ այս առակը»:

Առակում պատմվածը պարզ մի խոսակցություն է այգեպանի ու իր տանտիրոջ միջև, որը կարող ենք այսօր էլ գործադրելի դարձնել: Երբ մենք օրերով, շաբաթներով, ամիսներով ու տարիներով աշխատում ենք, սպասում ենք, որ մեր կատարած գործը իր արդյունքը տա և միաժամանակ մենք էլ օգտվենք դրանից: «Այգեպանն էլ թվենու մի ծառ տնկեց», - ասում է Հիսուս, - «Երեք տարի սպասեց նրա պառող վայելելու, սակայն իր հոոյսը կտրեց, որի համար էլ հրամայեց իր գործակորին, որպեսզի արմատախիլ անի այդ ծառը»:

Ինչպես առակից տեսանք, գործակորի պատասխանը հետաքրքրական է նրանով, որ նա թելադրում է տանտիրոջը վերջնականապէս մի բան- գելուց առաջ համբերություն ունենալ ու մի անգամ ևս փորձել:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյա, կարող է ինքն իրեն հարց տալ. «Արդ- յոք ես մի պաղաբեր ծա՞ռ եմ իմ ընտանիքի, իմ ժողովրդի, իմ եկեղեցու, ինչո՞ւ չէ նաև Հայրենիքի համար, թե թվենու նման անպառող եմ, որը արժանի է միայն կտրվելու»: Իրականում առակը հոգենոր մի դաս է մեր ժողովրդի բոլոր կավակների համար: Խոսքը անշուշտ դրամի, հարստության և ունեցվածքի մասին չէ, այլ՝ հավատքի, եղբայրական սիրո, փոխադարձ հասկացողության և այդ

սերն ու հավատքը շոշափելի կերպով գործի վերածելու մասին է: Դրա համար մեզանից յուրաքանչյուրը քաջությունը պետք է ունենա հանձն առնելու այդ զոհողությունը, որովհետև սիրո ամենացայտուն օրինակը զոհողությունն ու նվիրվածությունն են: Դպրոցն ու Ընտանիքը ինչի՞ են ծառայում, եթե չեն դաստիարակում: Գիրքը, թերթն ու հեռուստատեսությունը ինչի՞ համար են, եթե կարդացող ու լսող չունեն: Ծխական Խորիրդի, Տիկնանց, Երիտասարդաց և այլ Միություններ ո՞ւմ համար են, եթե նրանց ծրագրերին ու միջոցառումներին մասնակցողներ չկան:

Այգեգործի խնդրածի պես պետք է խնամենք, որպեսզի թվենին գոնե հաջորդ տարի պտղաբեր լինի: Պտուղը ինքնիրեն չի հասնում, այլ մշակների ամենօրյա աշխատանքի ու խնամքի կարիքն ունի:

Պողոս Առաքյալը Հռոմայեցիներին ուղղած իր նամակում քրիստոնյաներին խրատում է այս խոսքերով. «Հոգով եռացեք. Տիրոջը ժառայեցեք. Իուսով ուրախացեք. նեղության համբերեցեք, հաճախակի աղորեցեք... համերաշխ եղեք միմյանց հետ. գույք ձեզ իմաստունի տեղ մի դրեք, մեկի չարի փոխարեն չար մի հատուցեք...» (Հռոմ. 12:12-21):

Ամեն մեկս մի ծառ ենք տնկված Աստծու մեծ պարտեզում: Եկեղեցին փորձում է մեզ հոգեպես աճեցնել ու խնամել, մեզանից միայն սեր ու բարի գործեր սպասելով:

Որով, եկեք այսօր հետադարձ մի հայացք նետենք ու նայենք մեր ապրած կյանքին և մեզ հարց տանք, «Արդյոք բարի գործեր կատարել ենք, թե՛ թերացել ենք մեր պարտականությունների մեջ»: Եթե թերացել ենք, ուշ չէ, ժամանակ ունենք, ուղղվենք ու պատղատու ծառ դառնանք, որպեսզի զորանանք և Աստծու մեծ պարտեզում, ուր կան հազարավոր ծառեր ու ծաղիկներ, մենք էլ մեր տեղը ունենանք և երբ մեր Տերը գա նրա վրա միշտ լիքը ու քաղցր պտուղներ գտնի: Ամեն: